




ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 87

22 ՄԱՐՏ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ



- որ զատելուծիւն կաթեցնէ Աստուծոյ և իրեն  
 թշնամին՝ հայրն ստուծեանց, սատանայ,  
 իր բոլոր խաւարային և պատամբ ու մար-  
 դատեաց վարդապետութիւններով և սկզբ-  
 բունքներով . և Յիսուսի երկոտասան աշա-  
 կերտներէն մէկն անգամ, Յուդա, զգեցաւ  
 զասանայ, այսինքն՝ ատելութիւնը, և մասնեց  
 իր վարդապետը . և Հրեայք եւս ի հօրե ի  
 սասանայէ էին . և ժողովեցին ատեան, և ազ-  
 գասիրութեան պատրուակին ներքեւ, ի մահ  
 դատապարտեցին Արդարը, որու մասին ամէն օր  
 կը կարդային իրենց Սբազան Դրքերուն մէջ .  
 «Պայցեմ հոռով եւ բառնայցեմ զազս մեր.  
 լաւ է զի այր մի մեռանցի ի քան ամենայն  
 ազգս կորիցէ»։— Հերովդէս՝ անամօթ մարմա-  
 սաշտը, ատեց նոյնպէս զՅիսուս, և ծանակեց  
 իրբեւ յիմար։— Դրժող բարեկամութիւնն  
 իսկ գլծեցաւ . մարդիկնիրու երկիւղը՝ իոր-  
 տակեց առաքելոց առաքինութիւնը և սասա-

նեցուց Վէմը: Անոր տագնապններուն ժամանակ անոնք քնացան. երբ կալանաւորուեցաւ, ամէնքը փախան. եւ Պետրոս ուրացաւ:— Ամբոխը, շուայտ կրքերու, արբեցութեան և դրամի ստրուկ, մեծերու փաղաքշող, ատելութեամբ գազանացաւ անօգնական Արդարոյն դէմ: «Ասեցին զիս տաւապարտաց»:— Այսպէս կ'ատէ մեղաւորը:

2. ՀԱՆՈՒՄ: «Օրէնս արդարութեան» բռնութիւն մեր եղիցի... դարանակալ լիցում արդարոյն, զի դժպիհի եղել մեզ. եւ հակառակ եկաց գործոց մերոց... Մանրէ մեզ եւ թեսանելն զնա... Թեմամանօք եւ գանիւք խոսեանգեսցում զնա»: Սուրբերով ու բիրերով քաղեցին Անոր վրայ. չղթաներով կապեցին. քարշեցին ժողովներու առջեւ. թուք ու մուր արձակեցին, բռնեցքներ, ապտակներ տեղացուցին, խարաղաններով պատուեցին Անոր կուսածին մարմինը. սրածայր փուշերու բողբոջած խուրձով մը ծակեցին Անոր աստուածային գլուխը. վերքերով ծածկեցին Անոր սուրբ մարմինը. և հեղեղօրէն հոսեցուցին Անոր նուիրական Արիւնը:— Այսպէս կը հալածէ մեղաւորը:

3. ՍՊԱՆՈՒԹԻՒՆ: «Մահու խայտառակութեան դասեսցում զնա»: Յիսուսի մահը վճռուած ըլլալով հանդերձ, կեղծաւորեցան իրր օրինապահ և չուղեցին մտնել յապարանս, զի մի՛ պղծիցին, և ըսին. Մեզի օրէն չէ մեկը սպաննել: Սրտով և իրօք սպաննեցին, և լեղուով մերժեցին: Սպաննեցին աղաղակ բառնալով եւ մեծաձայն սփայելով՝ «Ի խա՛չ հան, ի խա՛չ հան զդա»: Սպաննեցին Անմեղը, զՍուրբն Սրբոց՝ աշխարհական իշխանութեան յենլով, և անոր օգնականութեամբը: Բարարբա աւագակը Անոր գերադասեցին. սուտ վկայութիւնները յաճախեցին. անմիտ բարբառնջանքը կամ Իրեն փառք եղող ճշմարտութիւնները՝ մահու պատճառ առաջարկեցին. «Ինքզինքը Թագաւոր կ'անուանէ. — Չարագործ է. — Ինքզինքը Աստուծոյ Որդի կ'ընէ. — Մենք օրէնք ունինք, եւ մեր օրէնքներուն համաձայն պէտք է որ մեռնի»: Պիղատոս գիտցաւ թէ արդար է, թագաւոր է, անմեղ է. և սակայն՝ աշխարհա-

սէր և վատ, անիրաւ դատաստան կտրեց. և հարցուց բայց չուղեց լսել թէ՛ ի՛նչ է ճշմարտութիւնը. դողաց՝ երբ լսեց այս ըսպառնալիքը, «Եթէ զասի արձակես, չես բարեկամ կայսեր»: Նիւթական և պղծարար լուացումով մը միտքարուեցաւ այն արդար արեան վրայ: Եւ մատնեց զՆիկայ անոնց կամբին: Անտարբեր լուութեամբ, անգործունեայ և վախկոտ անդիմադարձութեամբ՝ հալածումի և զրպարտութեան ու սպանութեան գործակցող բարիներու տիպարն է Պիղատոս:— Այսպէս կը սպաննէ մեղաւորը:

4. ՅԱՄԱՌՈՒԹԻՒՆ: Մինչդեռ բնութիւնն ամբողջ սուգ զգեցաւ, և ժայռերն անգամ պատուեցան, գերեզմաններ բացուեցան, ժողովուրդը կուրծքը բախելով Գողգոթայէն կը դառնար, այդ ահաւոր աստուածասպան մարդիկ յամառեցան ցվերջ, կամաւոր կուրութեամբ՝ բացայայտ հրաշից և ճշմարտութեան դէմ մնացին ամբարտաւան անհաւատ և ծաղրեցին Ամենասուրբը, և եղան անապաւստ: Այսպէս կը կորսուի յամառ մեղաւորը:

Բ. Հնդհակառակն, Գրիստոսի Տեսնն մերոյ ՍԿԶՈՒՆՔՆ Եղաւ՝

1. ՍԵՐ՝ ատելութեան դէմ: Իր մահուան նախընթաց երեկոյին՝ անհուն գորովով, խօսեցաւ Սիրոյ ճառը, որուն նմանը մարդու բերնէն ելած չէ բնաւ: Մարդկային ապիւրախութեան դէմ աստուածային անհուն Սիրոյ Ս. Խորհուրդը հաստատեց, ուրացումի և մերժումի փոխան՝ միաւորութիւն անբաժան, և մշտնջենաւոր ներկայութիւն: Խոնարհեցաւ իր ծառայից ոտքերուն՝ և լուաց զանոնք: Իւր Սիրարորոքը Սիրտը պատուեց բացաւ, և անոր բողբոջով բռնկեցուց զաշխարհ: Եղբայր եւ Որդի կոչեց իր աշակերտները. անյիշաչարութեամբ ընկեր եւ բարեկամ անուանեց մինչեւ իսկ իւր մատնիչը, զոր եւ խանդակաթ համբուրեց: Քնացան իր սիրելիները եւ արթնցուց. փախան՝ ու պաշտպանեց. ուրացաւ Պետրոս, եւ սիրուիլ նայեցաւ ու փշրեց սրտին ժայռը եւ զզջման արտասուք բղխեցուց անհատնում: Այսպէս կը սիրէ Յիսուս:

2. ՀԱՄԱԿԱՄՈՒԹԻՒՆ՝ հալածանքի դէմ: Մահուան տաղանակներու մէջ, ուժգին գոչմամբ եւ արտասուօք, արեան քրտինքնէր թափելով, խոնարհեցաւ եւ խմեց դառն բաժակը: Զկեցաւ հակառակ չարին, եւ հեզօհամբոյր՝ յանձնուեցաւ սրիկաներու: Զլուպարտեցին՝ ու չպատասխանեց. աղաղակեցին, ու լռեց. «Ան վե՛րին՝ ոչ բանայ զբռան իւր»: Իր ծառային՝ դատաւորին զիմաց կեցաւ ակնկոր: «Իբեւ որոջ առաջի կտրչի անմուռնջ կայ»: Խօսքերը եղան ճշմարտութիւն միայն ու զթուլթիւն. հրաշքով առողջացուց յարձակողին ականջը. միտթարեց երեսաղէմի սգազգեաց կիները. մահու տուալտանքներու մէջ ներում խնդրեց իր Հօրմէն: Խաչահանուաց համար: Մարդիկը իր ցաւագին Մօր զսուակ ըրաւ: Այսպէս կը զոհուի Յիսուս:

3. ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ՝ սպանութեան դէմ: Իր չարչարանօք, խաչովն ու մահով քաւեց մեղքերը եւ փրկեց զաշխարհ: Երեք գամերէ կախուած, աւազակներու միջեւ, մարմինը վիրալից, գլուխը փուշով պակուած, երեք ժամուան անպատմելի հոգեվարքին մէջ, իրեն ողջակէզ Դառն անարատ, ցաւոյ ու սիրոյ կրակով այրեցաւ, զմեզ փրկելու համար. եւ մարդկային փրկութեան «Ծառալի՛ եմ» գոչեց. եւ երբ իբրեւ առիւծ աղաղակեց եւ աւանդեց հոգին, այն ատեն սպաննեց մեղքը, երկիւղը, թշուառութիւնը, մահը: «Նորա վիտօքն բժեկեցաք»:— Այսպէս կը փրկէ Յիսուս:

4. Անհուռն ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ՝ բայց եւ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ՝ յամառութեան դէմ: Զըղջացողը, զիմուը, գոչողը, լացողը՝ իր կուրծքին վրայ սեղմեց. «Հա՛յր, բո՛ղ դոցա»:— «Այս որդի իմ մեռեալ եր եւ եկեալ»: Գրախոր անոր ջնորհեց: Դղրդեց տիեզերքը եւ բանակներ արթնցուց երկնաւոր առաքելութեան: Օրհնեալ եւ երկրպագելի յաւիտենից յաւիտեանս:— Բայց եւ զատապարտեց վերջնական անապաշխարները. «Ի վերայ կործանելոցն սասկուրիւն, եւ ի վերայ քո քաղցրութիւնն Ասուծոյ, եթէ կայցես ի նմին քաղցրութեան»:

Եւ երբ Անոր սրբազան մարմինն իջաւ ի հող մահու, իր թշնամիք կնքեցին գերեզմանը, աշխարհական իշխանութենէն զօրքեր պահապան դրին. անմիտնե՛ր, Աստուծոյ հետ խաղի ելան: Խորտակեց Նա մահուան դռները. փշրեց կնիքը. անկենդան տապալեց զինուորները, եւ ինքնիշխան զօրութեամբ, իր Եկեղեցւոյն եւ հաւատացելոցը նախատիպար, փառօք մեծաւ՝ իբրեւ յաւիտենական Թագաւոր Արդարութեան եւ անմահ Սիրոյ՝

ՅԱՐԵԱՆԻ ԱՍՏՈՒԱՆ՝,

Յւ ցուեցան ամենայն բօնամիջ նորա,  
Փախեան անելիք նորա յերեսաց նորա:

Ք Ա Ր Ո Ջ

ՅԻՍՈՒՍԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՅ ՎՐԱՅ

(Շար. եւ վերջ)

Բայց դառնանք Փրկչին հետ դատարանը, եւ տեսնենք, վերջին անգամ, մարդոց չարութիւնը լրացած իր պաշտելի մարմինը բռնաբարող զինուորաց քարքարոտութեամբ: Պիղատոս աւելի եւս համոզուած Փրկչին անմեղութեան մասին՝ Հերովդէսի ալ անոր վրա՝ մահուան արժանի բան մը չընտնելէն, բայց միշտ աւելի վա՛տ եւ երկչոտ՝ կը հրամայէ որ Յիսուսի տան ձաղկանքի ամօթալի պատիժը, որ միայն զերիններու յատուկ էր: Այս տանջանքով կը յուսայ գոհացնել Հրէից ատելութիւնը, եւ փրկել անմեղի մը կեանքը: Յիսուս կը մատնուի անա՛ զինուորաց վայրագութեան. եւ հո՛ս, եղբայրներ՝, կ'ուզեմ որ ձեր հաւատքը խօսքերու պակասը լեցնէ: Յիսուսի չարչարանաց վրայ կարեկցութիւննիւ յուզելը այնքան շահեկան պիտի չըլլայ. շատ աւելի լաւ է որ դուք վշտակիք Յիսուսը ընէք օրինակ ձեր կեանքին եւ դրդապատճառ ձեր զղջումին: Վայրենի գաղաններ կ'իյնան անոր սրբազան մարմնոյն վրայ, զայն կը մերկացնեն. այն՝ որ լոյսը զգեստի պէս հագած էր. հոս միայն կորանքով կը ծածկուի, եւ իր մերկութեան սաստիկ ամօթով կը քաւէ ձեր գայ-

թակղութիւններն ու անպարկեշտութիւնները, ո՛վ աշխարհասէր կանայք: Իր պարկեշտասուն մարմնոյն վրայ հարուածներու տարափ մը կը տեղան. քստմնելի վէրքով մը համակ ծածկուեր է այլ եւս, խուժուժ դահիճները կը պարտաւին՝ Ս. Հոգւոյն զօրութեամբ կազմուած մարմինը հարուածելէն, և այդ սրբապիղծներուն ուժը կը հատնի, բայց աստուածային գառին համբրութիւնը չի հատնիր: Թէեւ հազիւ վեր կը բռնէ իր բղքտուած մարմնոյն մնացորդը, զինք կ'արձակեն այդ անարգ սիւնէն, իրեն ծիրանի պատմուճան մը կը հագցնեն, զիւրաբեկ եղէգ մը կու տան իր շանթընկէց ձեռքը. իր սրբազան գլուխը փշէ պսակ մը կ'անցնեն խորամուկ. երեսը կը ծածկեն անարգական քօղով մը. առջեւը կը ծնրադրեն զինքը ծաղրելու և թշնամանելու համար: Ո՛հ, ծածկե՛նք մեր վշտահար սրտէն այն անարժան գործքերը, զոր իր պատմութեան շարունակութիւնը մեզի կը յիշեցնէ. դարձե՛նե՛նք աչքերնիս իրեն սրտած սրբապիղծ ապտակներէն, այն գարշելի թուքերէն որոնցմով կը ծածկեն այն փառաւոր գէմքը, որուն ղողալով հազիւ կը նային հրեշտակները. և զոր փափաքեցան տեսնել այնչափ թագաւորներ և մարգարէներ: Հա՛յր արգար, հո՛ս պէտք էր փառաւորել Որդիդ, ինչպէս թաքորի վրայ, և զինք, այսքան աղիողորմ նախատինքներէ ազատելու համար, չըջապատել փառահեղ ամպով. բայց դուն՝ ա՛լ զինքը չես ճանչնար, և իր կորանքն անգամ զքեզ կը փառաւորէ:

Սակայն թագաւորութեան զարհուրելի նշանը, որով զինք պսակեր են, կը պատուէ իր օգոստափառ գլուխը. արիւնը ամէն կողմէ իր երկնային երեսնի վար կը հոսի. այն աստուածային գիմագիծերը՝ որ զինք մարդոց ամենագեղեցիկը կը հանդիսացնէին, ջնջուած են. այն հզօր և ահաւոր ակնարկները, որ կարող էին, վայրկեան մը առաջ, դարձի բերել զբոլոթան աշակերտներ, կամ սրբապիղծները գետին տապալել Զիթենեաց պարտէզին մէջ, մարած են. այն գէմքը՝ որ երկինքի մէջ երանելեաց բերկրութիւնը պիտի ըլլայ,

լոկ քստմնելի և արիւնլուայ զանգուած մըն է դարձեր, որմէ դահիճներն անգամ աչքերնին մէկդի կը դարձնեն սոսկումով: Եւ ահա՛ տեսարանը զոր բարբառոս դատաւոր մը կը պարզէ իր պալատին շուրջը ժողվուած քահանաներուն և ժողովուրդին առջեւ: Յիսուս այս ողբալի վիճակին մէջ կ'երեւնայ դատաւորանէն դուրս. Ահա՛ մարդը, կ'ըսէ անոնց, Ահա՛ այրդ (Յովհ. ԺԴ. 5.): Ո՛վ դաւթաւորուն սուրբ թագաւորներ, հոգեշնչ մարգարէներ որ զինքը աշխարհի աւետեցիք, ա՛ս է ուրեմն այն զոր դուք այնքան եռանդով կը փափաքէիք տեսնել. ահա ուրեմն մարդը. Ահա՛ այրդ. ահա՛ վերջապէս փրկարարը որ այնքան դարերէ ի վեր խոստացուած է ձեր հայրերուն. ահա՛ մեծ մարգարէն զոր Հրէաստան աշխարհի պիտի տար. ահա՛ ամէն աղգաց ցանկալին, բոլոր տիեզերքի ակնկալութիւնը, ձեր օրինակներուն իսկական տիպարը, ձեր պաշտամունքին լրումը, ձեր բոլոր արդարներուն ակնկալութիւնը. Սինա կոկայի միսիթարութիւնը, Իսրայէլի փառքը, ամէն ժողովրդոց լոյսն ու փրկութիւնը: Ահա՛ այրդ. ահա՛ մարդը. այս ամօթալի նշաններէն կը ճանչնա՛ք զինքը:

Բայց թողո՛ւնք այս կատաղիները, թո՛ղ դարձեալ ինդրեն, իբրեւ շնորհ մը, որ անոր արիւնը ըլլայ իրենց և իրենց զաւակներուն վրայ, թողո՛ւնք որ կատարեն, Ազատարարը մերթելով՝ ինչ որ նախապատմուած է, և արդարացին իր պաշտօնը՝ յանձն չառնելով իրեն հաւատալ: Ներեցէ՛ք որ զինքը ցոյց տամ ուրիշ հանդիսականներու, ձեզի՛, հղբայրնե՛ր. Ահա՛ այրդ ահա՛ մարդը. ահա՛ ձեր միսիթարութիւնը, եթէ դուք իր աշակերտներէն էք: Աստուծոյ ձեզի ղրկուած վշտերու մէջ կրնա՞ք տրանջելու համարձակիլ. ակնարկ մը ձգեցէ՛ք Յիսուսի վրայ. որ ձեզի համար այսքան կորանքի և սուայտանքի մասնուած է. ահա՛ մարդը. Ահա՛ այրդ. եթէ անիրաւութիւնը զձեզ կապտեր կողոպտեր է ձեր ստացուածքէն, զրկեր է ձեր պատիւներէն ու տիտղոսներէն. տեսէ՛ք այնքան թագաւորներու յաջորդը մերկացած իր մեծութեան ամէն նշաններէն, ամէնէն

անարգ գերիներէն ալ նուաասացած . չի պահեր իր բոլոր շքեղ և անմահ տիտղոսներէն եթէ ոչ մարդ անուէր զոր դեռ եւս իրեն կուտան . և որուն կերպարանքը կապտեր են իրմէ զինք ծածկող վէրքերն ու արիւնը . ի՞նչ ըսելիք ունիք , ահա մարդը , Ահա՛ այրդ : Եթէ տարապարտ կը վարկաբեկեն զձեզ , ապա՛նջ զրէք այն զրպարտութիւններուն որ կը տեղան իր վրայ . դեռ եւս կը համարձակի՞ք տրոնջել . ահա՛ մարդը . Ահա՛ այրդ : Եթէ Բրիտանիական կեանքի պարտքերը կը պարտասցնեն երեսն ձեր տկարութիւնը . եթէ դուք ձեզի կ'ըսէք գաղտնարար որ առաքինութիւնը մեր քարոզածին չափ խիստ չէ . ահա՛ ձեր պատասխանը . տեսէ՛ք թէ արեան չափ պիտոցե՞ր էք . այս պատկերին մէջ ուսումնասիրեցէ՛ք ձեր պարտքերուն չափը . ձեզի առաջարկուածը ձեզի պէս մարդ մըն է և մարդ եղած է ձեզի համար միայն . Ահա՛ այրդ , ահա՛ մարդը : Բայց ահա՛ ձեր գործը և ձեր անօրէնութեան և ապերախսութեան լրումը եթէ մեղաւոր էք . ահա՛ խժգժական արարքը զոր կը նորոգէք ամէն անգամ որ մեղաց հաւանութիւն տաք . ահա՛ մարմինը զոր կ'անպատուէք երբ ձերինը ազտեղէք . ահա՛ օգոստոսիառ գլուխը , զոր փըշով կը պսակէք երբ ցանկութեան հեշտանկար պատկերները ձեր մտքին վրայ վնասակար տպաւորութիւններ ընեն . ահա՛ այս պանքները զորս կը կրկնէք երբ ծաղրէք արդարներուն բարեպաշտութիւնը , ահա՛ որքազան մարմինը զոր կը բզբտէք երբ կոտորէք ձեր եղբայրներուն անունը . մէկ խօսքով , ահա՛ ձեր դատապարտութիւնը և ձեր գործը ահա՛ մարդը , Ահա՛ այրդ : Կրնա՞ք անզգայ մնալ այս տեսարանին առջեւ . պէ՛տք է որ նորէն Գողգոթա ելլէ . կ'ուզէ՞ք ձեր ձայները խառնել նենգաժէտ Հրէից աղաղակներուն և խնդրել դարձեալ որ խաչուի : Կը համարիք կ'ըսէ Ս . Օգոստինոս , թէ այսօր կը լրանայ անոնց չարութիւնը որ զինք խաչին պիտի դամնէ . կը խաբուիք , ձեր չարութիւնը կը լրանայ , եթէ ձեր անհաւատարմութիւններով փճացնէք իր խաչին արդիւնքը . եթէ անարգէք իր փառքին մէջ անխկայ զոր Հրո-

ւաները միայն իր կորանքին մէջ անարգած էին . եթէ նորէն խաչէք զայն , որ յարութիւն առաւ այլ եւս չմեռնելու համար . Թուի իմն այնպէս եթէ կատարեցաւ այսօր չարութիւն մարդկան , որք գողգոթա Աստուծոյ ի խաչ հանին . այլ մեծ եւս է նոցայն , որք ասեցին զնեմարտութեան պատուիրանս , վասն որոց Որդին Աստուծոյ ի խաչ ել . (Ս . Օգոստ . Մ . Սղմ . է .) :

#### Գ . Մ Ս Ս

Բայց ինչո՞ւ չեմ կրնար լմնցնել հոս իր չարչարանաց պատմութիւնը , և ցոյց տալէ ետեւ զինքը՝ մատնուած Հօրը արդարութեան իր հոգեվարքին ատեն , մարդոց չարութեան՝ դատարանին մէջ , ինչո՞ւ չեմ կրնար զինքը երեւան բերել ձեզի Գողգոթայի վրայ՝ մատնուած նոյն խակ իր սիրոյն . և ցոյց տալ ձեզի որ իր մահը կատարեալ լրում մըն է :

Այո՛ , եղբայրներ , միայն իր սրտին մէջ վնասներ և իր չարչարանքին պատճառներն ու չարժանիքները : Զինք մեռցնողը չէ , ո՛չ ապակերտի մը նենգութիւնը , ոչ քահանայից նախանձը , ոչ ժողովուրդին փոփոխամտութիւնը , ոչ Պիղատոսի թուլութիւնը , ոչ գահիճներուն խժգժութիւնը . այլ՝ իր սէրը . Ինձի համար մահնուեցաւ , կ'ըսէ Առաքեալը (Գաղ . Բ . 20) , եւ եթէ զիս չսիրէ , երբեք չեմ չարչարուեր : Վայրապար երկրի ազգերն ու թագաւորները Բրիտանիոյ դէմ պիտի դաշնակցէին , եթէ իր սէրը անոնց համախոհ չըլլար . անոնց խորհուրդները վերիվայր պիտի տապալէին և անոնց բոլոր ճիգերը պիտի ելլէին ի դերեւ :

Բայց Յիսուս-Բրիտանիոյ իրենց սիրեց , կ'ըսէ Աւետարանիչը , իսպառ սիրեց զանոնք (Յովհ . ԺԳ . 1) , իբրեւ գորովատ հայր մը , որուն իր որդւոց նկատմամբ ունեցած սէրը կը կրկնապատկուի աշխարհէս ելլելու վայրկենին . ուստի մեռնելով կը լրացնէ իր սէրը , և այդ իր սրտին մէջ վառած աստուածային սէրը , միակ հուրն է որ կը բռնկցնէ խաբոյիլը ուր պիտի գոհուի :

Այնչափ հնարագէտ , որ կը գտնէ գաղտնիքը մեռնելէն վերջն ալ անդադար

զոհուելու. որ կը կատարէ իր մահուան պատրաստութիւնը, զայն պատկերացնելով խորհրդաւոր նշաններու տակ. որ իր արեան արդիւնքը կը հաղորդէ, կանխաւ անոնց խմցնելով զայն. որ իր աշակերտներուն իրմէ զրկուելուն դարման կը տանի, երկրպագելի խորհուրդին քօղին տակ յաւերժացնելով իր ներկայութիւնը անոնց ձեռաց մէջ. որ չկրօնալով մեռնիլ առանց անոնցմէ բաժնուելու, ոչ ալ անոնց հետ մնալ առանց զանոնք զբրկելու իր Հոգւոյն պարգեւէն, կը մեռնի՝ Մը-խիթարիչը անոնց զրկելու համար. և միանգամայն կը մնայ անոնց հետ մինչեւ աշխարհիս վերջը, որպէսզի որբ չմնան և սիրտերն ին տրտում տխուր չտառապի:

Սէր այնքան անշահախնդիր, որ կ'ուզէ նեղութիւն կրել միայնակ, կը խնդրէ որ իր աշակերտներուն խնայեն. թոյլ տուի դոցա երթալ (Յովհ. ԺԼ. 8). իր չարչարանաց վրայ լալու հաւանութիւն չի տար. և աւելի զբաղած ու զգածուած կը թուի Երուսաղէմի սպառնացող աղէտներով քան նոյն անհաւատարիմ քաղքին իրեն պատրաստած ահաւոր տանջանքով: Արդարեւ իր խաչին կորացուցիչ փայտը ունի առած այս նոր Իսահակը կ'ելլէ խորհրդաւոր լեռը, ուր իր սէրը և իր անմեղութիւնը զինքը պիտի զենուին, և երբ Երուսաղէմի դստերք, իր ծայրաստիճան ցաւերէն յուզուած, փղծկած չէին կրնար արցունքնին բռնել այս տեսարանին առջեւ. Դսեբ'բ Երուսաղէմի, կ'ըսէ անոնց, իմ վրաս մի՛ լաք, լացե՛ք յաւեհ դուք ձեր վրայ. օրեք պիտի գան ուր երանի պիտի տեսնեք որ գաւակ չեն բերած (Ղկա. ԻԳ. 28. 29). իր սէրը իրմէ կը ծածկէ ահաւոր խաչը որուն վրայ զինքը պիտի գամեն. և ցոյց կու տայ իրեն այն աղէտները միայն որ կը սպառնան այդ ապաշնորհ քաղքին: Բայց իր սէրը հոս նոյն լեզուն կը բանեցնէ ձեզի. իրեն ամենամեծ ցաւ պատճառողը իր չարչարանքները չեն այլ ձեր անհաւատարմութիւնները և ձեզի սպառնացող չարիքները. իմ վրաս մի՛ լաք, կ'ըսէ ձեզի այսօր, մինչ խաչը ուսը առած իր զոհը լրացնելու կ'երթայ. լացե՛ք յաւեհ դուք ձեր վրայ. Մի՛ ցաւիք ի տես իմ

տառապանքիս, ցաւեցէ՛ք յաւեհ ձեր հոգւոյն տխուր վիճակին վրայ և ձեզի պատրաստուած յաւերժական թշուառութեանց վրայ. Մի՛ լայք ի վերայ իմ. այլ լացե՛ք ի վերայ անձանց... ձերոց: Ես պիտի յաղթեմ մահուան, բայց դուք, պիտի յաղթե՞ք երբեք այդ հինցած մեղքին, որ այնքան ատենէ ի վեր հոգինդ մահուան մատներ է. որ կը վրդովէ ձեր հանգիստը. որ ձեզի բաղձալի կ'ընէ ձեր դարձը, բայց միշտ անյաղթելի արգելք մը կը գնէ անոր. Մի՛ լայք ի վերայ իմ. այլ լացե՛ք ի վերայ անձանց ձերոց: Ես փառաւորապէս գերեզմանէն պիտի ելլեմ՝ այլ եւս չմեռնելու համար. բայց դուք պիտի ելլե՞ք երբեք այդ խոր անդունդէն ուր թաղուած էք այնքան տարիներէ ի վեր. մինչեւ վերջը պիտի չչատանա՞ք այդ ամուլ ճիգերով, որոնցմով կարծես չէք կանգնիր, հանդիսաւոր օրերու. մէջ, եթէ ոչ անմիջապէս վերջը աւելի ամօթով ու թուլութեամբ նորէն իյնալու համար. Մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացե՛ք ի վերայ անձանց ձերոց: Ո՛հ ինծի դժուար պիտի չըլլայ փշրել այս չլթաները, որոնցմով զիս կապուած կը տեսնէք, և անոնցմով չլթայել ամբողջ տիեզերքը խաչիս ոտքին. բայց դուք պիտի խորտակե՞ք երբեք ձեր սիրտը չլթայող մեղքի կապերը. ա՛յն կապերը, զորս հասակն ու բերումները ամրապնդեր են. որոնցմով բեռնաւորեալ՝ այս սուրբ օրերուն մէջ պիտի մօտենաք իմ սեղաններուս, և որոնց զօնգակ հանգոյցները աւելի եւս պիտի ամրացնէ իմ խորհուրդներուս շնորհքը՝ արքայդ թեման ոճիրով զոր պիտի գործէք՝ առանց զղջումի անոնց մերձենալով: Ուստի իմ վրաս մի՛ լաք այլ յաւեհ դուք ձեր վրայ լացե՛ք. Մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացե՛ք ի վերայ անձանց ձերոց:

Սէր այնքան վեհ, որ, խաչէն կախուած՝ կ'աղօթէ զինք խաչողներուն համար. խեղճ զբոսովեան գեռ եւս իր վրայ թողած ուժերը կը ժողվէ կ'ամփոփէ՝ անոնց դաւաճանութիւնը իր Հօրը առջեւ ածբասիր ընելու համար. կը բարձրացնէ իր մարմնածափն. Հայր իմ, ներե՛ իրեց, կ'ըսէ, որովհետեւ չեն

գիտեր ի՞նչ կ'ընեն (Ղկա . ԻԵ . 34) . անոնց ոճիրը լուալու համար իր ամբողջ արիւնը կ'ընծայէ . և խաչն իսկ որմէ զինք կախեր են , նուիրական սեղան մը կ'ըլլայ , ուր կ'ուզէ զանոնք Հօրը հետ հաշտեցնել : Փրկի՛չ իմ , կը մեռնիս թշնամիներուդ համար . իսկ մենք մահուան կը սպասենք մեր եղբայրներուն ներելու որոշում տալու համար :

Սէր այնքան յաղթական , որ , մահուան կէտին իսկ , աշակերտ մը կը շահի : Իր խօսքը կապուած կաշկանդուած չէ բնաւ իրեն հետ . իր քովը վերջին շունչը տուող չարագործին վրայ գթալիւր ակնարկ մը կը ձգէ . իր նուազեալ և արդէն իսկ շիջեալ աչքերը կրնան տակաւին յաղթել սիրտերու . այս կորակոր ամօթահար թագաւորը զեռ եւս թագաւորութիւններ կը խոստանայ : Երանի՛ք զի , ո՛վ ոճրագործ , որ այսօր կը վայելիս իր արեան երախայրիքը և որ , առանց ականատես ըլլալու իր գործերուն , միայն իր համբերութենէն կը ճանչնաս իր մեծութիւնը : Բայց երանի՛ նաեւ ձեզի , ո՛վ մեղաւորներ , որ ինծի կ'ունկնդրէք , այսօր ամէն բան ակնկալեցէ՛ք իր ողորմութենէն . իր հոգի աւանդելու վայրկեանը յատկապէս ձեզի պէս մեծ մեղաւորներու համար է . ձերն են իր վերջին հառաչներն ու իր արեան երախայրիքը :

Վերջապէս սէր այնքան ուշադիր և փափկանկատ մինչեւ յետին շունչը , որ կը յանձնէ իր վշտահար մայրը ամենասիրելի աշակերտին , և աշակերտը իր մօրը . Կի՛ն դու , անա՛ որդի քո : Ապա ասէ ցաւակե՛րսն , անա՛ մայր քո (Յովհ . ԺԹ . 26 , 27) : Վերջին անգամ կը դառնայ դէպի այդ ցաւազին Կոյսը , կը տեսնէ զայն իր խաչին ոտքը՝ ընկըմած վշտի ու դառնութեան ծովու մը խորքը , իր արդէն նուաղած աչքերը անոր վրայ մարելու մօտ են : Ի՛նչ փոփոխակի ակնարկներ՝ Մարիամու և իր մահամերձ Որդւոյն միջեւ . փոխադարձ սիրոյ ի՛նչ վշտազին և թաքուն արտայայտութիւններ այս տըխուր բաժանումին մէջ . ինչ սայրասուր սուսեր կը միտուի նոյն պահուն այդ ցաւահար մօր սիրտը . ո՛րքան անսեռանելի զոհեր , քանի՛ օն անբացատրելի ցաւեր , այդ վայրկե-

նին . ո՛հ , աստուածամայրութիւնը ո՛րքան թանկ պիտի արժէ եղեր Մարիամու : Բայց Մարիամ իր տառապանաց մէջ , կ'երկրպագէ զինք հարուածող ձեռքին . Հօր արդարութեան կը նուիրէ այդ անմեղ զոհը որ վերջին շունչը կու տայ . կը համակերպի շահերուն ամբողջ մարդկութեան , որ պէտք ունէր այս մեծ զոհին , և մեզի կը սորվեցնէ թէ մեծ վիշտերը մեծ օգուտներ ունին , և թէ հաւատքի նկատումները՝ միտարարութեան անըսպառ աղբիւր են վշտահար հոգւոց համար :


Վերջապէս Յիսուս-Քրիստոս աշխարհիս վրայ այլ եւս մեզի համար ընելիք բան մը չունենալով , ամէն ինչ լրացած ըլլալով թէ՛ Հօրը արդարութեան , թէ՛ մարդոց չարութեան , թէ՛ իր սիրոյն կողմէն . մեծ զոհը մատուցուած ըլլալով եւ ամէն հին օրինակները կատարուած . երուսաղէմ իր հայրերուն չափը լեցուցած . մարդարէից բոլոր պատգամները յայտնուած , պարզուած . ճշմարիտ պաշտօնը հաստատուած . Հօրը փառքին վրէժը լուծուած . իր պաշտօնին ընթացքը աւարտած . այլ եւս անկարող իր սիրոյն աւելի մեծ նշաններ տալու մարդոց , կը յայտարարէ թէ ամէն բան լրացեր է . Ամենայն ինչ կատարեալ է : Գլուխը կը ծռէ , ուժգին աղաղակ մը կ'ուղղէ դէպ ի երկինքը , կը մեռնի , կ'աւանդէ Հօրը այն հոգին ու շունչը որ անկէ առեր էր : Թողո՛ւնք արեւուն խաւարիլը , երկրի աղջամուղջով ծածկուիլը , ժայռերու ճայթիլը , գերեզմաններու բացուիլը , բնութեան տակն ու վրայ ըլլալը , Փրկչին թըշնամիներուն իսկ զինք դաւանիլն ու ճանչնալը . չեմ ուզեր բնաւ հոս առջեւնիդ պարզել այս մեծ երեւոյթները . Յիսուս-Քրիստոս՝ որ իր սէրէն մեզի համար զոհուեցաւ , միակ սքանչելիքն է որ զմեզ զբաղեցնելու է : Նկատեցէ՛ք ուրեմն զինքը որ միայն ձեզի համար խաչին վրայ հոգին կ'աւանդէ դժնդակ տանջանքներով . կը մեռնի ձեր ազատարարը , կը մեռնի ձեր տեղը , կը մեռնի ժամանակի մէջ , որպէս զի դուք չմեռնիք յաւիտենապէս . կը մեռնի , որովհետեւ զձեզ կը սիրէ . կը մեռնի , որովհետեւ դուք զինքը

չէք սիրեր: Այլ եւս կրնա՞ք չափ և սահման դնել ձեր կարեկցութեան, ցաւին ու երախտագիտութեան. և նզովեալ չէ՞ք ըլլար եթէ խաչուած Յիսուսը չ'իրէք:

Գողգոթայի վրայ իր մեռնիլը տեսնողները այսօր իրեն կ'ըսեն. ի՞նչն է ի՞նչի՞ր որ քեզի հաւատանք (Մտթ. Իէ. 32): Բայց մենք հոս բոլորովին տարբեր կերպով խօսելու ենք իրեն. Որովհետեւ խաչն ես ելեր, ո՛վ Փրկիչ, և հոգ այսօր հոգիդ կ'աւանդես, և Հօրդ աջ կողմը թողած կ'ընտրես այդ անարգ գահը, որ մեր պատարագն ու քահանայապետն ըլլաս. ահա՛ ասոր համար մեր մի միակ միութարութիւնն է քեզի հաւատալ, զքեզ նշկատել իբրեւ մեր միջնորդը, և քեզի նուիրել մեր մնացած կեանքը: Մի՛ վար ի՞նչեր այդ նուիրական փայտէն, ուր միակ յոյսն ես ժողովուրդիդ, այլ յաւէտ զմեզ ալ հոգ քովդ քաշէ՛, ինչպէս որ մեզի խոստացար. որչափ աւելի նախատուած անարգուած տեսնենք զքեզ, այնչափ աւելի մեր հաւատքը կ'առաւելու, մեր յոյսը կը հաստատուի, մեր սէրը կը բորբոքի: Մեզի համար նուիրուած այդքան ցաւեր ու տանջանքներ կրնա՞ն մեզի անօգուտ ըլլալ. մեր հոգիները այդքան թանկ կը գնէի՞ր, եթէ ուզենայիր թողուլ որ աշունք կորստեան մատնուին. և կը մեռնէի՞ր այդքան նշաւակութեամբ, եթէ, խաչիդ մասնակցելով, հաղորդ պիտի չըլլայինք օր մը քու հետդ անմահութեանդ փառքին: Ամէն:

Մասիկոն

Թարգմ. ԽԱՉԻԿ Վ. ԱԹԱՆԱՍԵԱՆ



## ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

(ԳՈՒՄ-ԳԱԲՈՒՒ ԱԶԲԻՆ ՓՈԽԵԸ)

(Շար.)

Մեր յօդուածագիրը կը շարունակէ իր խօսքն ըսելով.

2. — Պատրիարքութենէ զրկուած, հիմայ իր Կաթողիկոսական կարծեցեալ իշխանութեամբ կը փոթորկէ Հայ-Կաթողիկ հասարակութեան կեանքը, նորանոր դաւեր նիւթելով:

Ո՛րքան հղալարական սէր, ի՛նչ գութ ու գորով Կաթողիկէիցս հանդէպ. գալլու սէր՝ որ կը խղճայ քաջ հովուին հսկողութեան ներքեւ արածող ոչխարներուն ու զանոնք անկէ հեռացած կ'ուզէ տեսնել իր փորը յադեցնելու տենչանօք: Բայց քիչ մը մտի՛կ ըրէ՞ք, պարո՞ն. Ամեն. Թէրզեանը՝ Պատրիարքութենէ զրկուած, այլ Փաքիկութենէ. որովհետեւ Պատրիարքութիւնը Եկեղեցական այնպիսի իշխանութիւն մըն է որ՝ այժմ Հայոցս մէջ՝ ո՛չ ոք կրնայ օրինաւորապէս իր վրայ կրել բաց ի Թէրզեան Կաթողիկոսէն, հետեւաբար կարծեցեալ բառը, ձեր պետելուն ինքնազիր Կաթողիկոս պատուանդան կրնայ վերադիր ծառայիլ: Իսկ Հայ-Կաթողիկէիցս խաղաղ կեանքը փոթորկողը՝ Թէրզեանը՝ չէ, այլ Ալպոյաճիկի նման՝ ըմբոստութեան հրաւէր կարգացողներն են. աւժօթ, որ այդպիսի վատ պաշտօն մը կ'ըստանձնէք: Բայց ձեր նպատակը շատոնց հասկըցեր ենք. ձեր ուզածը մակաբերած ենք. Սաղըզ-Աղածը միշտ Գում-Գաբուի աչքին փուշն է եղած. Կաթողիկէիցս գէմ պատերազմ հրատարակողը, մեր քաջ նահատակներուն արիւնը ծծողը և մինչեւ ցարդ ալ՝ Կաթողիկէիցս մէջ իր չար կեռիքներուն որս փնտռողը՝ Աւագի-Գրան աղմկարանն է եղած, ինչպէս Աւետիքի նման անկրօն զիւցազնւորու պատմութիւնը կը վկայէ: Գում-Գաբուի տակ Եկեղեցի ու կղեր գերի է երկրային կրից. հոն մեռած է Քրիստոնէական հոգին (մեղք). հոն քմածին և աշխարհահաճոյ նկեղեցի մը ու կրօնք մը կայ. հոն հոգեւոր

կեանքի շիրիմն է, հոն՝ Գրիստոս չէ թա-  
գաւորողը. այլ մարգկային կրքոտ ու փոփո-  
խամիտ կուսակցութիւնը. և զմեզ ալ այդ  
վիճակին մէջ ձեր կղերէն ու Եկեղեցւոյն  
բախտակից տեսնելու բաղձանքով՝ մեզի գէտ  
դաւ լարողները՝ դուք էք և ո՛չ թէ թէր-  
դեան: Անխիղճ շողորթութիւնը, եղբայր կը  
կոչէք զմեզ հայոցելով մեր Հօրը գէտ, խը-  
րախոյս կարգաւով՝ որ մենք ալ մեր Գլուխն  
ու Պետը ոտնակոխ ընենք, և այդ զլիւռն  
հետ ոտնակոխենք նաեւ ճշմարիտ կրօնքը ու  
մեր պատիւը: Զմեզ տկարամիտ ու բանէ չի  
հասկցող տղաներ կարծեցիք: Հեռո՛ւ, Աստ-  
ուածամարտներ՝ որ Զեր մէջ գտնուող Գր-  
իստոնէութիւնը և անոր պաշտօնեաները  
ձեր քմահաճոյքին ծառայեցնելէն չգոհանա-  
լով, գէնքերնիդ մեզի գէտ կը դարձնէք՝ դը-  
րախտի օձին մեղրազօծ թուհաւոր լեզուով:  
Մե՛ղք է, մե՛ղք ձեզի, որովհետեւ ունայն  
են ձեր ջանքերը. չի՛ փչիր այն առնը՝ զոր  
չինեց Աստուած, եւ որուն մէջ շնորհօք Աս-  
տուծոյ պիտի մնանք ցմիշտ, և որուն ար-  
ժէքը նիւթապաշտ ու գոռոզ սրտերուն չի՛  
յայտներ Աստուած:

Յ. — «Թէրդեան իր մալուսնդական և  
ռանդոմը, ուրեմն կ'ուզէ ոտնակոխ ընել ազ-  
գային բոլոր աւանդութիւններն և անոնց  
աւերակոյտը պատուանդան ընել Հոռոմի Ա-  
թոռին անխալական պետերուն գլխը նետ-  
ուելու համար»: — Թէրդեան է. որ իր կը-  
րօնասիրութեամբ ոտնակոխ կ'ընէ ազգային  
աւանդութիւնները: Էֆէնտի'ս, եթէ սխալ-  
ներ գտնուին այդ աւանդութեանց մէջ, զա-  
նոնք չչտկելը թէ խղճի հակառակ է և թէ  
ազգասիրութեան. և այդ սխալը չտկելու  
համար ալ մե՛նք ոչ Գում-Գարուի հրամանին  
և ոչ ալ անոր կամայ հպտակելու պար-  
տականութիւնն ունինք. իսկ թէ որ ճշմա-  
րիտ, ուղիղ ու սուրբ են այդ աւանդու-  
թիւններն՝ Թէրդեան զանոնք, մի՛ վախնաք,  
չ'ոտնակոխեր. այլ ինքը կը հանդիսանայ ա-  
նոնց առաջին պաշտպանը. որովհետեւ Թէր-  
դեան ճշմարիտ կրօնասէր ըլլալով՝ անխիղճ  
չէ և քմահաճոյ ու շահախնդիր ընթացք չի  
բռներ: Անկրօն Մեհրութանները, Արշակ, Պազ

ու Արտաշիր զեղիս ու անխիղճ Թագաւոր-  
ները, ուրացեալ Վասակները, Գարջոյնները  
ու մեր պատմութեան էջերը պղծող նման  
էականն ու անոնց հարազատներն են ազ-  
գային փառքերը ոտնակոխողները, հայրեն-  
եաց զլիւռն սուգ բերողները ու զայն իրենց  
կրից ծառայեցնողները, և ո՛չ թէ անոնք որ  
կրօնից ու ազգութեան սիրոյն համար Վար-  
դաններու, Վահաններու, Ներսէսներու պէս  
կուրծք կու տան թէ՛ արտաքին թշնամեաց և  
թէ՛ ներքին զրուժաններու: Ամեն. Թէր-  
դեանի կուրծքին մէջ կը բաբախէ այնպիսի  
ազգասէր սիրտ մը, որուն մօտ ձերինները  
կը նսեմանան: Կրօնքը մարդուս համար ա-  
մենէն հարկաւոր բանն է. վասնզի զմեզ Աս-  
տուծոյ հետ կը կապէ բարոյապէս. իսկ ազ-  
գութիւնը զմեզ մեր նմաններուն կը կապէ.  
հետեւաբար էակ մը որ կ'ոտնակոխէ կրօնքը,  
և անոր գէտ կը մարսնչի՝ մարդ անուան  
արժանի չէ՛, և այնպիսին կրնայ իր ազգու-  
թիւնն ալ ուրանալ. պատմութիւնը կեցեր  
է. Ամեն. Թէրդեան կրօնասէր է և ազգա-  
սէր. ուստի կը ջանայ միշտ անթերի ու  
սուրբ պահել կրօնքը, որպէսզի սրբագործէ  
ազգութիւնն ալ: Հետեւաբար ամէն ինչ որ  
կրնայ և պէտք է բարեփոխուի պիտի բա-  
րեփոխէ Ամեն. Թէրդեան, բայց ինչ որ ար-  
դէն կատարեալ է, փոխել կարելի չէ: Մենք  
էջմիածնայ ցնորքներուն և Գում-Գարուի  
խառնակութեանց համար ոտեղծուած չենք,  
այլ Աստուծոյ ծառայելու համար. հետեւա-  
բար պիտի կառչինք բոլոր ուժով այն Վի-  
մի՛ն՝ զոր Աստուած հիմ զրած է իւր Եկե-  
ղեցւոյն, եւ չպիտի ամչնանք բարձրագլուխ  
պարծելու մեր հաւատքին ու կրօնքին հա-  
մար: Պօռացէ՛ք ո՛րչափ որ կրնաք մինչեւ  
որ ձանձրացած դադարիք. իսկ մենք դար-  
չելով ու զգուանօք կը նայինք ձեր մոլորա-  
կան ու Աւետարանի հակառակ արարքնե-  
րուն, եւ միւս կողմանէ կ'աղօթենք որ  
Աստուած իր շնորհօք ձեր քարացած ու հո-  
գեւոր կեանքէն ախորժ չզգացող սրտերը ի  
բարին փոխէ, եւ այսպէս ընդհանուր Հայու-  
թիւնը մէկ սիրտ, մէկ հոգի ըլլայ ի՛ փառս  
Աստուծոյ, յօգուտ հոգւոց եւ ի բարգաւա-  
ճանս մեր ողբացեալ Ազգին:

Գ.

## ՍՐԱՍՁԱՆ ՍԱՆԳՈՒԹԵ

Այն Ս. Սանդուխտը որուն վրայէն ելաւ ու իջաւ. Բրիտտոս Տէրն մեր Պիղատոսի պալատան մէջ, այժմ կը պահուի ի Հռոմ: Բրիտտոսէութեան ամենանշանաւոր յիշատակարաններէն մին է, եւ զայն այցելելու համար ամէն կողմանէ անհամար հաւատացելոց բազմութիւններ կը դիմեն, մանաւանդ Մեծ-Պահոց ուրբաթները: Այլեւայլ ներողութիւնք չնորհուած են այս այցելութեան:

Հոտ հաստատուն աւանդութեան, Կոստանդիանոս Կայսեր մայրն՝ Ս. Հեղինէ, մօտաւորապէս 326ին, երբ գտաւ Ս. Խաչը յերուսաղէմ, Պիղատոսի ապարանքէն եւս վերցնել տուաւ այդ սանդուխին աստիճանները եւ փոխադրել տուաւ ի Հռոմ, զանոնք Կայսեր միջոցաւ զրկելով առ Ս. Սեղբեստրոս Բահանայապետ, որ Ս. Սանդուխը զետեղեց Լատերանու Կայսերական պալատին մէջ, ուր կը բնակէին ան ատեն Բահանայապետները, եւ զոր ընծայած էր Կոստանդիանոս:

Յամին 884 Սերգիոս Բ. Բահանայապետ այդ աստիճանները չարել տուաւ սանդուխի ձեւով եւ վրան կամարակապ շէնք մը շինեց. իսկ 1191ին Կեղեսոփնոս Գ. կամարին մուտքը գոցեց սղնձի զուռով եւ վերջը Ս. Սանդուխը փոխադրեց Լատերանու կամարաբանին մէջ: Սեքստոս Ե. 1589ին Լատերանու Պապիլիփան եւ ապարանքը շքեղապէս նորոգելէն վերջը, Ս. սանդուխը փոխադրեց մօտակայ աղօթարանը՝ որ Սրբազան Պապերուն Մատուռն էր, ուր կը պահուին նշանաւոր նշխարներ, Ամենափրկչին նուիրական Պատկերին հետ: Այս Մատուռը կը կոչուի Սրբութիւն Սրբութեանց: Այս Մատուռը կառոյց ճարտարապետ Դոմ. Ֆոնդանա եւ զետեղեց հոն Ս. Սանդուխը, ինչպէս այսօր կը տեսնուի:

Սանդուխը կազմուած է՝ Տիւրական կոչուած երակաւոր սպիտակ մարմարէ 28 աստիճաններով, եւ յարգութեան համար ծընրադիր կ'իլլուի անոր վրայ: Կղեմէս Ժ. Բ.

ծածկեց զայն ընկուզեայ թանձր տախտակներով. որպէս զի շարունակ շփումով չմաշի:

Ս. Բահանայապետներն ալ ծնրադիր կ'իլլուէին անոր վրայ. Պիոս Թ. այսպէս ելաւ նաեւ 1870 տարուան 20 Սեպտ. ի նախընթաց երեկոյին:

Մատուռը զեղեցիկ գոթական ոճով շինուած եւ երեւելի որմանկարներով զարդարուած է: Վերելը նկարուած է Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի մարտիրոսութիւնը. եւ որմերուն վրայ Ս. Նիկողայոս Պապին պատարագ մատուցանելը եւ Սրբոցն Ստեփանոսի եւ Լաւրենտիոսի չարչարուիլը եւ Ս. Ագնէսի նահատակութիւնը:

Պիոս Թ. շքեղապէս զարդարեց մատուռը. Ս. Սանդուխին վարի կողմերուն վրայ դնել տուաւ արձաններ, Յուդայի համբոյրը, եւ Պիղատոս որ ցոյց կու տայ Հրէից զՅիսուս: Մատրան պահպանութիւնը յանձնեց Բասսիոնիսը կրօնաւորներու:

Պիոս Ժ. նկարները նորոգել տուաւ երեւելի նկարիչ Չինկոլանիի որ հին շքեղութիւնը տուաւ անոնց:

## ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

### ՏՕՆԱՅՈՅՑ

|         |                                        |
|---------|----------------------------------------|
| Մարտ 23 | † Կիր. Զարուբեան աճ. Զատիկ             |
| 24      | Բշ. ալ. Բ. օր Զատիկ                    |
| 25      | Գշ. քճ. Դ. » եւ Աւետ. Ս. Կուսին        |
| 26      | Դշ. քճ. Դ. »                           |
| 27      | Եշ. քճ. Ե. »                           |
| 28      | Ուրբ. քճ. Զ. »                         |
| 29      | Շք. քճ. Է. » եւ գլխաւորմն Յովհ. Մկրտչի |

Ս. ԹՈՎԱԾԱՍ ԱԳՈՒԻՆԱՑԻ,  
Հ Բ Ծ Տ Ա Կ Ա Յ Ի Ն Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ

(Շար.)

Բնաւ ձեռքը գրիչ չէր առնուր մասնաւորապէս չաղօթած, եւ ոչնչափ եռանդուն էր այս բարեպաշտ հրահանգին մէջ, որ ամբողջ գիշերներ կ'անցընէր աղօթքով, հանգիստի աւելի ժամանակ չտալով եթէ ոչ այնչափ որչափ հարկաւոր էր իր կեանքին թշնամի

ըլլալու համար, Պատարագի Ս. Զօհր զոր ամէն օր կը մատուցանէր, մեծապէս ծառայեց իր վրայ գեղեցիկ լոյսեր հրաւիրելու: Իրեն սովորութիւնը բրած էր՝ իր պատարագէն վերջը ուրիշ պատարագի մը սպասուորի:

Հետեւաբար կրնանք ըսել որ՝ եթէ ուրիշ նիւթերու մեկնաբանութեանը մէջ միւս ամէն վարդապետները կը գերազանցէ, այս անպատում՝ Խորհրդայն և այս աստուածային Զօհրն ուսուցանան մէջ նա կը գերազանցէ նաև ինք զինքը: Կրնայ ամէն ոք այս բանին համոզուիլ՝ կարդալով ինչ որ նա գրած է այս նիւթիս վրայ, մանաւանդ այն ժամերգութեանէն զոր նա յօրինեց հրամանաւ Ուրբանոս Գ. Քահանայապետին, ի պատիւ տօնախմբութեան Ամենասուրբ Հաղորդութեան: Ս. Բնաւենդաւրա որ Նորին Արքեպիսկոպոսն ինչորեքնակ հրաման մը ընդունած էր, Բարիչու մէջ օր մը Ս. Թովմասի տոյցերութեան երթալով, անոր գրասեղանին վրայ գտաւ այս ժամատացութեան Երեկոյեան ժամուս սա գեղեցիկ կցորդը, զոր Ս. Թովմաս նոր յօրինած էր. «Ո՛վ սրբազան ինչոյք» ևն. և այնչափ գոհ մնաց անկէ, որ երբ վերագործաւ իւր անհեալը, ինչ որ մինչեւ այն ատեն գրած էր, ամէնն ալ պատուեց:— Հաստ անդամ՝ Երկինք բացայայտ վկայութիւններ տուաւ Ս. Թովմասի՝ իր գրութեանց մէջ ճշմարտութիւնը գրած ըլլալուն համար: Ի մէջ այլոց, անգամ մը՝ ինչպէս սովոր էր ընել իր բոլոր գծաւորութիւններուն մէջ, երբ առ Աստուած դիմեց և Ս. Նիկողայոսի մատարան մէջ աղօթքով կ'անցունէր գիշերը, յանկարծ յափշտակուեցաւ և քանի մը կանգուն բարձրացաւ գիտնէն: Եւ խաչելութիւնը որ խորանին վրայ էր, բարձր և իմանալի ձայնով մը ըսաւ իրեն. «Թովմաս, իմ վրայօք լաւ գրեցիր. աղօթք վարձի կ'ունգես»:— «Ձեզ վրայն, ո՛վ Տէր, պատասխանեց նա:

Երբ կը գրէր Եսայիայ մեկնութիւնը, սաստիկ դժուարեմանց տեղ մը հանդիպելով, օրերով պահեցողութիւնը ըրաւ ծանով, և գիտութեանց Տիրոջ յոյժ եռանդնաբարձր պաղատանքներ մատուց, որպէս զի այդ կտորն իմանալի ընէ իրեն համար: Հետագայ գիշերն Ս. Պետրոս և Ս. Պողոս Առաքելները երևեցան իրեն և այն տեղը մեկնեցին իրեն:— Ամէն պարագայի յատուկ աղօթքներ ունէր, Ս. Պատարագի պատրաստութեան, յետ Պատարագի շնորհակալութեան, ուսմանքի կամ գրելու սկսելէ առաջ, և այսպէս ամէն գործէ առաջ:

Աւ Ս. Աստուածածին Կոյնն ունեցած ջերմեռանդութիւնը արժանացուց զինքն Անոր այցելութիւններուն: Հաստ անգամ տեսանելի կերպով երևեցաւ անոր Ս. Կոյնը և Ս. Թովմաս իր մահուանէն քիչ առաջ վստահութեամբ յայտարարեց թէ ինչ որ Անոր բարեխօսութեամբ հայցած էր Աստուծոյ, ամէնն ալ ընդունէր էր անպատճառ:

Իր հոգին այնչափ յարած էր ուսմանքի, որ ներկայ գտնուող անձերու մտածումովը չէր կրնար

անկէ բաժնուիլ: Օր մը, Մանիքեցւոց աղանդին դէմ աշխատած ատեն, այնչափ խորասուզուած էր այս մտածումին մէջ որ երբ Գաղղիայ Ս. Լուգոփիկոս թագաւորին հետ կը ճաշէր, յանկարծ ձեռքը սեղանին վրայ դարձելով, ըսաւ բարձրաձայն. «Լուցաւ Մանիքեցւոց գործը», այսինքն՝ թէ ո՛չ մի Մանիքեցի կարող է պրծիլ այս պատճառաբանութենէն, Մեծաւորը որ իր քովն էր, քաշեց անոր զգեստը ուշաբերելուն համար: Անմիջապէս որ հասկցաւ նա թէ ուր էր, խնորհարար ներումն խնդրեց Նորին Վեհափառութենէն՝ իր այս մտաւորական ցրումին համար: Բայց թագաւորը վերահասու ըլլալով խնդրոյն իսկութեան, նոյնհետեւն զրազիւր մը կանչել տուաւ այդ պատճառաբանութիւնը գրի առնել տալու համար, և անկէ վերջը աւելի յարգեց ու մեծարեց Սուրբը:— Երբեքն այնչափ կը յափշտակուէր տեսիլքով, որ կարծես անզգայ կ'ըլլար, և մարդէ աւելի արձանի մը կը նմանէր:

(Շարունակելի)

## ՀՈԳԵԻՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գիւր և. — ԴԼ. Ե. — Ս. Գրոց ընթերցման վրայ:

(Շար.)

Կարդիկ կ'անցնին, բայց Տիրոջ ճշմարտութիւնը կը մնայ յաւիտեան:

Աստուած՝ առանց մարդահաճութեան, այնչափ կերպով կը խօսի մեզի:

Մեր հետաքրքրութիւնը սեպ գլեց կ'արգելու Ս. Գրոց ընթերցումին ժամանակ, երբ կ'ունգնի իմանալ և մանր խուզարկել ինչ որ պէտք էր պարզապէս կարդալ ու անցնիլ:

Երկ կ'ունգես օգոստոսի կարդալ խոնարհութեամբ, միանշանակաբար և հաւատարմ. և քանի մի փափայլի գիտականի անուն և համբաւ ունենալու:

Յօժարամիտ հարցո՛ւր, եւ յոյժ մեկ ըրէ արդոյ խօսիւր. եւ մի՛ արհամարհէր ծերերու առակները. քանզի առանց պատճառի չիւ ըսուիր:

## ՃԵՆՈՎԱՑԻՔ Ի ՀՌՈՄ

Իտալիոյ ճենովա քաղաքին Կաթողիկոս եռայք վերջին ատարձանի վրդովեցան Ս. Քահանայապետին անուանած իրենց Արքեպիսկոպոս Արհի. Գարոնին Կառավարութենէն éxequaturի գլացումին համար, որոյ հետեւանօք այդ Արքեպիսկոպոսը զիւ հետեւ կը մնայ իւր Աթոռէն: Ուստի՝ այս թեմին Կաթողիկոսները, թէ՛ իրենց կառավարութեան անի-

բաւութեան դէմ բողոքելու և թէ՛ Կաթողիկէ անուան տակ՝ Կաթողիկէ եկեղեցւոյ վնասներ բերող արդիականներու, ազգայնամոլներու և Ս. Աթոռոյ և իրենց օրինաւոր Հովուին դէմ հետադնեւութեան դաս մը տալու մտօք, չքեղ խումբ մը կազմեցին ժողովրդեան ամէն դասակարգէն, երկուհարիւր անձերէ աւելի, որուն մէջ կը գտնուէին բարձրաստիճան եկեղեցականք՝ ամէն եկեղեցիները, դպրոցները, քաղաքները, և այլն ներկայացնող. մեծամեծ Իշխաններ, Դուքսեր, Մարքիզներ, նոյնպէս ազնուազարմ Տիկնայք և Օրիորդներ, Իշխանուհիք, Դքսուհիներ, և ինչ ամէնքն ալ մէն մի Հաստատութիւն, մէն մի Ընկերակցութիւն կամ ժողովրդեան դասակարգ մը ներկայացնող։ Այս ներկայացուցիչ հանդիսաւոր խումբը անյապաղ դիմեց ի Հռոմ, յոտս Ս. Քահանայապետին, և յաւէտ անմոռանալի Ունկնդրութիւն մ'ուսնեցաւ, որուն մանրամասնութեանց կ'ուզենք փոքր ի շատէ ակնարկել։ Այս տեսակ յիշատակելի դէպքերը գերազանցապէս հրահանգիչ են։

Անցեալ Փետր. ի 22ին էր, որ վերոյիշեալ խումբը մօտա Վատիկանու պալատը, ուր, Կարդինալաթողովի (Consistoire) Դահլիճին մէջ ընդունուեցաւ Ս. Ք. Պիոս Ժ. ի կողմանէ։ Կ'ուզէին իրենց բարձրագոյն բողոքը հնչեցնել եկեղեցւոյ Հովուապետին առջեւ, և աղաչել որ իրենց սիրելի Հովիւը՝ Արհի. Դարմը զրկէ իրենց, խոստանալով նախապէս գրաւականը իրենց սիրոյն, հնազանդութեան և նիւթական գոհաբերութեան։

Նախ խօսեցաւ Ուխտաւորութեան Նախագահ՝ Գեր. Տէ Ամբլէս։ Խորին յարգութեամբ երախտագիտութիւն յայտնելէ, և Կառավարութեան ապօրինի գործը դատապարտելէ վերջը, ըսաւ. «Մենք բողոքեցինք կը բողոքենք ու պիտի բողոքենք յաւէտ՝ թէ՛ իբր Կաթողիկէայք և թէ՛ իբր ձեռնակցիներ, ցորչափ հասարակաց իրաց վարիչները չճանչնան Ձեր և մեր իրաւունքը։ Մենք զգացինք Ձեր ոտքերուն գալու պարտքը, ո՛վ ամենասրբազան Հայր... Կաթողիկէ ձեռնովա Ձեր առջեւն է... Հո՛ս է ձե-

նովա. յայտնելու համար Ձեզ իւր խորին ցաւը ի տես Ձեր ա'յնքան դառն վիշտին և իւր փափաքը՝ տեսնելու կսկիծի և տրտմութեան ամէն պատճառի Ձեզմէ՝ փառատիլը... Երանեալ Հայր. զրկեցէ՛ք մեզ այն Առաջնորդը՝ զոր Դուք ընտրեցիք հայր ըլլալու համար մեր հոգիներուն. մենք պիտի սիրենք զանիկայ, պիտի հնազանդինք անոր, և պիտի տանք իրեն այն ամէն ապացոյցները, նաեւ նիւթական, որ սէրն ու յարգանքը մեզի կը ներշնչեն, և ուրախ եմ ներկայացնելու Ձեր Սրբութեան Պատրիկատոհմ Մարքիզուհի Բալլավիշինի ինքնագիր մէկ նամակը, որով Արհի. Դարմն Սրբեպսկ. ի տրամադրութեան տակ կը դնէ իւր չքեղ պալատը՝ Բէլլի Վիլլային, որ Լիւկուրիոյ պերճագոյններէն մին է։ Խօսեցէ՛ք, ո՛վ ամենասրբազան Հայր, և մենք պատրաստ ենք Ձեր հրամաններուն։ Ձեռնովա կ'ուզէ շարունակել իր փառսուր աւանդութիւններուն մէջ՝ հաւատոյ, սիրոյ դէպի եկեղեցին, դէպի Քահանայապետն և դէպի իւր Եպիսկոպոսն... Եւ եթէ մէկ մը գրտնուեցաւ, Ամենեքանեալ Հայր, որ հասարակաց Դահլիճին մէջ յանուն ձեռնովայի այն պիսի գաղափարներ յայտնեց, որ վիրաւորեցին Ձեր խանդակաթ Սիրտը, ո՛հ, հաւատացէ՛ք, ձեռնովա զայն չի ճանչնար իբր թարգման իւր մտածումին։ Եւ՝ ամէնքս ալ որ հոս ենք, կը հաւատունք հանդիսաւորապէս, ձեռնովա զՁեզ կը սիրէ, Ձեզի կ'ունկնդրէ ու Ձեզի կը հնազանդի։ Մենք արտասանեցինք ու աղօթեցինք. մենք կ'ուզենք որ ձեռնովա, քաղաք Ամենասրբունւոյն Մարիամու, ինչպէս որ եղաւ, նոյնպէս միշտ շարունակէ ըլլալ քաղաք Քահանայապետին...»

Այս գեղեցիկ ճառէն վերջը խօսք առաւ Հրամանատար Պետրոս Մատուքոյ, և ի մէջ այլոց՝ ըսաւ. «Թոյլ տրուի նաեւ ինձ միացնել իմ ձայնս՝ իբր հաւատարիմ թարգման մեր ընկերակցութիւններուն և վշտահար Աւագ-Թեմին։ Դէպ աեւ Աթոռն Պետրոսի որդիական յարգանաց զգացումէն մղուած, մենք եկանք հոս, Ձեր ոտքերուն առջեւ, ո՛վ Սրբազան Հայր, կրկնելու համար Ձեզի՝

մեր ամբողջ սէրը, հաստատելու համար Ձեզ՝  
մեր ամբողջ հպատակութիւնը, խնդրելու  
համար չնորհ և օրհնութիւն ձերնովայի ժո-  
ղովրդեան վրայ: Մերս ձենովա, հպարտ  
իր ճարտարագործութիւններուն եւ վա-  
ճառականութեան համար, խորխտ իր Հա-  
ւատքին և կրօնական ու քաղաքական  
աւանդութեանցը համար, խորապէս զգած-  
ուած ու խոցուած է, իւր սրտին մէջ, տես-  
նելով զՁեզ, Ամենեւեալ Հայր, վշտահար  
Ձեր որդւոց համար, որոնց արգելք կը դրուի  
Քրիստոնէական պարտուց շաւղին մէջ ա-  
ռաջնորդուիլ այն բարեմոյն Հովուէն, զոր  
Ձեր իմաստութիւնը մեր վրայ կարգեց: Ձե-  
նովա, յարգազիր օրինաւոր իշխանութեան,  
բայց ըմբոստ ու է անիրաւութեան դէմ,  
չ'ուզեր՝ այսքան ծանր պարագաներու մէջ,  
բռնութիւններու ամենէն ամպարչտագոյնին  
տակը մնալ:— Եւ բողոքները, Ս. Բեռնար-  
դին անմահ գրուածքը, արդիական ընդ-  
դիմախօսներուն Լիկուորոյ հարազատ դա-  
ւակն ըլլալը ուրանալէն վերջը, համոզմամբ  
հաւատացեալ եւ Քրիստոսի Փոխանորդին ա-  
մէն ակնարկներուն իսկ հլու եղող այս ժո-  
ղովրդեան թարգման աշխարհականը կը շա-  
րունակէ ու կ'ըսէ. «Մենք, ձենովայի ներ-  
կայացուցիչներս, այն վեհանձն ու արժա-  
նաւոր ձենովայի որ ճշմարիտ խանդավա-  
ռութեամբ եւ գուցէ Իտալիոյ մէջ միակ եւ-  
ղող օրինակով մը՝ իրեն սիրեցեալ ու փա-  
փաքելի Արքեպիսկոպոսին տրամադրութեան  
ներքեւ կը դնէ այն ամէն բան զոր ազանդը  
(Ֆրանմասօնութիւնը) կը մերժէ անոր (\*),  
կը խոստանանք Ձեր առջեւ մեր ամբողջ  
սէրը ու մեր ամբողջ հպատակութիւնը...:  
Ամբողջ կղերն ու ժողովուրդը սիրալիր յար-  
գանօք պիտի չըջապատէ մեծարելի Հովիւը  
զոր մեզի սահմանեցիք եւ զոր բարձրաձայն  
կը խնդրենք Ձեզմէ, ո՛վ ամենեւեալ Հայր  
եւ ստոյգ ենք որ մեր կրկնապատկուած կը-  
րօնական եռանդը շուտով մոռցնել պիտի տայ  
իր քաջած անիրաւ ցաւերը...:

(\*) ձենովայի հաւատացեալները իրենց մէջ տե-  
ւական հանգանակութեամբ իրենց Արքեպիսկոպոսին  
ծախքերուն համար ազատութիւն են տարեկան հինգ  
հազար Օմմ. ոսկիէ աւելի:

Այսքան սրտագին եւ քաղցր արտայայ-  
տութեանց առջեւ Սրբազան Հօր գորովալիր  
սիրար խանդաղատեցաւ. եւ խօսեցաւ նը-  
շանաւոր պատասխան մը: Գովեց ձենովայի  
հաւատացիւց եռանդը որ զանոնք մղած էր  
ձմեռ ժամանակ իսկ ճամբորդութեան ամէն  
տեսակ դժուարութեան յանձնառու ըլլալով  
գալու միխթարելու իւր ցաւը: «Մեր այս  
ցաւն, ըսաւ, յանչափս կ'առաւելու, որով-  
հետեւ չենք գիտեր ինչպէս դարմանել զայն,  
չճանչնալով այն շարժառիթները որոնց հա-  
մար մինչեւ հիմա խափանուեցաւ Արքեպոսին  
գալուստը զոր տասը ամիսէ ի վեր անուա-  
նեցինք. որովհետեւ թերթերուն ըսած պատ-  
ճառները ամէնն ալ պատուարեր են Եպս.ին,  
որ եթէ այլազգ վարուած ըլլար, այս պաշ-  
տօնին անարժան եղած կ'ըլլար»:— Ամենայն  
համբերութեամբ տարած է օրինաց հակառակ  
այդ արգելքին, լրացրութեան ամօթալի յար-  
ձակումներուն, զրպարտիչ մեղադրութիւն-  
ներուն՝ հասարակաց ժողովներուն մէջ հայ-  
րենեաց թշնամիներուն... Բայց չէր կարծեր  
քնաւ որ իր տասնամեայ Քահանայապետու-  
թեան մէջ առաջին անգամ ըլլալով այսքան  
մեծ անիրաւութիւն մը գործուի, ամենա-  
կարեւոր Թեմի մը Եպսկ.ին մասին. Եպսկ.  
մը որ իւր երկարժամանակեայ անցեալին  
մէջ ճանչցուած է յամենայն օրինակելի,  
ամենէն սիրուած, գովուած նոյն իսկ աշ-  
խարհական իշխանութիւնէն...: «Բայց, յա-  
րեց Սրբազանը, կ'ընդունինք նաեւ այս վիշտն  
ու նեղութիւնը, որուն թոյլ կուտայ Տէրը.  
բայց ո՛չ առանց զգալու այն ծանր անար-  
գանքն որ կ'ըլլուի Եկեղեցւոյ Գլխոյն՝ իր  
աստուածային առաքելութեան մէջ, եւ ո՛չ  
առանց բողոքելու բռնութեան մասին որ կը  
գործուի այն ազատութեան եւ անկախու-  
թեան դէմ, զոր չէ թէ մարդիկներէ ունի  
այլ նոյն իսկ Աստուծմէ»:— Ողա Սուրբ  
Հայրն ապահովցուց զանոնք թէ մեծ էր իր  
միխթարութիւնը իրենց ներկայութեամբ.  
չնորհակալութիւն յայտնեց անոնց տրա-  
մադրութեան թէ՛ բարոյապէս ընդգրկելու  
իրենց հովիւն եւ թէ՛ նիւթապէս սատարե-  
լու իրեն առատօրէն. բայց թէ ցաւօք սրտի

պիտի չկարենայ այսօր լսել անոնց աղա-  
չանքն ու զրկել Նպակ .ը, նոր անարգանաց  
առիթ ընծայած չհամարուելու համար...  
Արիարար սակայն կը յուսայ յԱստուած որ  
զինքը կը պաշտպանէ, և մեծ սփոփանք կը  
զգայ աղօթքէն: «Աղօթքը Քրիստոնէին զըլ-  
խաւոր պարտքն է ամէն ժամանակ, բայց  
մանաւանդ դժուարին ու փոթորկալից ա-  
տեններ»: Եւ կը յիշէ Յովսափատ սուրբ Թա-  
գաւորին խօսքերը (Բ. Մնաց. Ի. 12.), թէ՛  
երբ նեղութեանց մէջ անօգնական մնացած  
ենք ու չենք գիտեր ի՞նչ ընենք, կը մնայ  
մեզ միայն աչքերնիս երկինք վերցնել առ  
Աստուած: «Ո՛հ, կարելի չէ գիտնալ և հաս-  
կընալ թէ ո՞րչափ կը զօրեն աղօթք, մաղ-  
թանք և հառաչանք եռանդուն քահանանե-  
րու, խոնարհ կղերականներու, սրբանուէր  
կոյսերու և բարեպաշտ հաւատացեալնե-  
րու»...: Աղօթենք ամէնքս ալ այն յարա-  
տեւ վստահութեամբ զոր մեզ կը սորվեցնէ  
Տոմբիթայ գիրքը, թէ ո՞րչափ մեծ ըլլայ զօ-  
րութիւնն զոր Աստուած կուտայ մարդոց,  
ան երբեք չկրնար ստանանել Իր վճիռներուն  
և խորհուրդներուն. և ամէն ոք ստոյգ ըլ-  
լայ որ եթէ Աստուած զմեզ կը դնէ փորձու-  
թեան, նեղութեան ու պատժոյ մէջ, զայս  
կ'ընէ առաջնորդելու համար զմեզ ողորմու-  
թեան, ազատումի և պսակի. մրրիկէն վերջը  
խաղաղութիւնը վայելելու համար, ցաւէն  
վերջը ուրախութիւն ու արցունքէն վերջը  
ցնծութիւն պարգեւելու համար մեզի:

Ապա սրտարուղիս խօսքերով օրհնեց ներ-  
կաները և անոնց լոլոր պարագաները:

Չափ չունէր այս բարի հաւատացեալնե-  
րուն ուրախութիւնը և մխիթարութիւնը.  
գիրար կը շնորհաւորէին այսպիսի աննման  
Ունկնդրութեան մը համար: Այն օրը ցնծա-  
լից անցընելով, շտապեցին ի ձենովա— ա-  
ռանց նայելու իրենց յոգնութեան, — որպէս  
զի ներկայ գտնուին այն հաագին միքիսկին  
զոր ձենովայի թեմին երկու միլիոնի չափ  
Կաթողիկեայք գումարեցին իբրեւ նշան ի-  
րենց անդառնալի կամքին ու բողոքին:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Հ Ռ Ո Մ Ե Ի Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Է Ա Շ Խ Ա Ր Հ

Ուրախութեամբ կը տեղեկանանք թէ Ս. Քա-  
հանայապետը, որ քիչ մը հիւանդացեր էր, առող-  
ջացած է բոլորովին:

\*. Քրիստոնէութեան յաղթանակին ժՁ. հա-  
րիւրամեակին հանդիսութիւնները պիտի սկսին Զատ-  
կին:

\*. Ապրիլ 40ին, Հռոմ, Լատերանու եկեղեցւոյն  
մէջ, Լեւոնեան դպրոցին կողմէ Զայնուոր Պատարագ  
պիտի մատուցուի, առթիւ այդ ժՁ. Հարիւրամեակին:

\*. Մեծահազագէս շքով կատարուեցան Ս. Բրաք-  
սետայի եկեղեցւոյն մէջ, Յիսուսի ձաղկանքի սիւնին  
ստինքը: Այս սրբավայրը Ն. Վ. Մէրի տէլ Վալ  
կարդինալին տխրոսաւոր եկեղեցին է: Ն. Վ. ը, փա-  
կուծի օրը, հայրապետական պատարագ մատուցեր է  
ընթերցալուծեամբ Վալմարօզի բնդհ. Արքայօր,  
Ս. Բրաքսետայի Արքային, և Կիստերոսականաց ընդհ.  
վանահօր:

Հարաւային Ամերիկայի վարժարանին աշակերտ-  
ները սպասաւորութիւն ըրեր են պատարագին:

\*. Փիլիպպոս Գրիգորի թիւրքի, Թիւրքի  
Ռիշէյմի արքեպիսկոպոսին մէկ նամակին վրայ, ժողո-  
ւի կանչեց վարչութիւնը Թիւրքի Մովսէսօյին, Փիե-  
մոնթէի Սոչիէթա Էսթրիլէ Բովանայի պաշտօնական  
թերթին, որ Միլանի Իսալիա լրագրին պէս պիտի ըն-  
դունի եկեղեցական իշխանութեան անուանուած խոր-  
հուրդի մը հսկողութիւնը, ինչպէս հրամայած էր Ս.  
Քահանայապետը: Այս եղելութիւնը մեծ շինութիւն  
ստուաւ հաւատացելոց:

\*. Ս. Վինկենտիոս Պաւլայեցւոյն Գթութեան  
Քոլլեջը, կառավարութեան հրամանաւ բնակութիւն  
հաստատած էին, տկար և հանգստեան կարօտ Քոյ-  
բրու համար, Կոնսթանդնուպոլիսի մէջ՝ Տանկիէն 31 քիլոմէթր  
հեռու, Պալմիկի ծովուն վրայ: Բնականորար իրենց  
ձեռնառութիւնը չէին զլանար գիւղական ձկնորս ըր-  
նակչաց հիւանդներուն, առանց խորութեան կրօնքի  
և ազգի Գրգռութեամբ բողոքական թերթի մը, որ  
սկսած էր բարեօրոտ Քոյրերուն դէմ՝ բուռն կռիւ մը  
մղել, ամբաստանելով զիրենք իբրեւ լինական  
գաղափարներ ծաւալող, ներքին գործոց նախարարը  
իրենց հրամայիք է հեռանալ Կոնսթանդնուպոլիսի պաշ-  
տօնապէս հիւանդներ գարմանելին պատրուակ բե-  
րելով:

\*. Սպանիոյ դեսպան Մ. Գալպէթոն իր ընծա-  
յաղիրները Ս. Քահանայապետին մատուցանելէ մի  
քանի օր վերջը սկսած է բանակցութեան մտնել Ար-  
տաքին Գործոց Պաշտօնեայ Կարդինալին հետ՝ կար-  
գաւորելու համար ծանր խնդիրը կրօնաւորական միա-  
բանութեանց, որոնք պատճառ եղած էին Մատրիտի

և Հոռոմի միջեւ յարաբերութեանց խզուելուն: Գաւազանաւորապէս խոսակցութիւններէ յետոյ, դեսպանը կարգինալին ներկայացուց Մ. Ռոմանովի կառավարութեան առաջարկները և Մէրի տէլ Վալկարդինայը, մի քանի օր վերջը, յանձնեց անոր Վաւերական հակառակմանը:

Այս Ս. Աթոռին հակառակմանը ներշնչուած են հաշտութեան անկեղծ բաղձանքէ մը, այնպէս որ մեծ յոյս կայ թէ վերջնական միաբանութիւն մը պիտի կնքուի անտարակոյս. բայց, խնդրոյն կոճկոտ բնոյթէն, կարելի է որ բանակցութիւնները քիչ մը երկար տեւեն:

Ն. Վ. Պուռնը կարգինալը Ուէսթմինսթըր Արքեպիսկոպոսը, Ղոնարա, Գէնտինթոնի քաղաքատան մեծ սրահին մէջ կարեւոր բանախօսութիւն մը ընելով քրիստոնէական ընկերաբանական առողջ սկզբունքները պարզեց արդի Սէնթիզալիսմի մասին:

Վոգուէտի Գեր. կարգերէցը ձեռնակեր է վերանորոգելու այն մատուռը ուր Յովհաննա տ'Արք ստէպ կ'ըլթար Գաղղիոյ համար աղօթելու: Ն. Ս. Պիոս Ժ., ինքնագիր նամակով մը օրհնեց ե այս ձեռնարկը: Վերտէօնի Եպիսկոպոսը, Արչի. Շոլէ եւս նոյն ձեռնարկը քաջալերեց և 4000 ֆր. ալ նպաստ ղրկեց է: Այս տութիւն Շաքէլ Գաւրալ sp Վոգուէտի անունով ամսաթերթ մը կը հրատարակուի Փետր. 23էն սկսեալ, ուր տեղեկութիւններ կը տրուին նկատմամբ Յովհաննա տ'Արքի կենաց, Վոգուէտի Գեր. կարգերէցին վերանորոգման ձեռնարկին, և աղագային վերակազմութեան գործին որ սկսուած է Գաղղիացւոց մէջ աղօթքով և բարեխօսութեամբ երանուհի — քիչ վերջը սրբուհի — Յովհաննա տ'Արքի և Գաղղիոյ ամէն պաշտպան սուրբերուն:

#### ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԷԱՐԱՆ

Ծաղկազարդը տօնուեցաւ, ըստ Ն. Տոմարի, Աւագ Թեմի ամէն եկեղեցիներու մէջ: Զայնաւոր պատարագ մատուցուեցաւ Բերայի Ս. Աստուածածին, Ղալաթիոյ Ս. Փրկիչ, Բաղկէգոնի Ս. Լեւոն եկեղեցիներու մէջ:

Նոյն օրը մի քանի անձնաթ երիտասարդներ, անպարտաճանաչ ուսանողներ և վարձկան էջմիածնականներ զբոսնուած ըմբոստներու սագրանքներէն, կազմ և պատրաստ ամէն զինով խռովութիւն հանելու, սպըռաւ մտած էին Ս. Աստուածածին աթոռանիստ եկեղեցւոյ հոծ բազմութեան մէջ: Հանդիսաւոր ժամերգութեան վերջ, Զայնաւոր Պատարագը սկսաւ. նորակազմ դարաց դասը կ'երգէր ներդաշնակ և եւանգալիստ. պատարագին էր խաչիկ Վ. Աթանասեան: Երբ սարկաւազները յիշատակեցին Ամեն. Կ. Պատրիարքը, յիշեալ խռովարարները, եկեղեցւոյ խմբաբանին վարի կողմը, հանեցին աղմուկ մը, որ իսկոյն խղզուեցաւ եւանգուին ջանքով թունդ կաթոլիկներու և ոստիկաններու, որոնք փութով եկեղեցիէն դուրս վտարեցին այդ սրբապիղծ ամբարիշտներու վատ խմբակը, և Պատարագը շարունակուեցաւ անաղաղ և աւելի եւանգալիստ. պատկառարարութեամբ:

Գիշեր դուրս վտարեցին այդ սրբապիղծ ամբարիշտներու վատ խմբակը, և Պատարագը շարունակուեցաւ անաղաղ և աւելի եւանգալիստ. պատկառարարութեամբ: Հաւատացեալները, արք և կանայք, անխռով շարունակեցին տեսել Ս. Պատարագը, որմէ յետոյ ուռ օրհնուեցաւ և բաշխուեցաւ ժողովրդեան խուռն բազմութեան. իսկ եկեղեցւոյ բակը ձգուած ընդդիմադիր խռովարարները, ոստիկանական պաշտօնեաներու կողմէ ձերբակալուելով տարուեցան կառավարչական պաշտօնատուն: Ասոր վրայ վարչական ըսուած ժողովին անդամներէն ոմանք, որոնք ցարդ, ժողովուրդը խաբելու համար, եկեղեցւոյ մէջ եղած ցաւալի դէպքերուն հեղինակութիւնը իրենց վրայէն կը ջանային մէկ դի նետել ստապատիր հնարքներով, կեղծ ողբերով, կոկորդիլոսի արցունքներով, ահա՛ այդ անդամները փութացին ելթալու այդ յանցաւորները ջատագովելու և աղատելու: Կրնայ արդեօք ասկէ աւելի ակներեւ տեսնուիլ թէ իրենք են այդ խռովարարներու զբոսնները, իրենք են որ զանաք այդ վատթար արարքներուն կը մղեն: Հակառակ ամենանուիրական սկզբունքներու, հակառակ հաւատքի և նոյն իսկ մտքի անդդուելի կանոններուն, հակառակ եկեղեցւոյ սրբազան օրէնքներուն, հակառակ նոյն իսկ կառավարութեան որոշ յայտարարութեան, որ նախապէս իրենց պաշտօնական կերպով ծանոյց թէ՛ Մորթի եւ պաեսամմի Թաւրիոյ մէջ ազատ են. կառավարութիւնը սիպաւած է այդ ազատքինը ապահովել եւ զայն բուխարացներ պատահաւել իթէ իրենք չեն պատճառը այդ հակակաթողիկէ, հակակրօն ցոյցերուն, ինչո՞ւ թեր կ'ըլլեն ոճրագործներուն. եթէ իրենք են, ինչ երեսով ինքզինքնին դուռ ևս կաթողիկէ և ճշմարիտ կաթողիկէ կ'անուանեն: Աստուած իմ, ինչ անհեթեթ վիճակի կը մատնէ զմարդկայր կերբը: Կամ անուանիդ փոխեցէ՛ք կամ գործքերնիդ:

#### Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Դիւանագիտական վստահեցի աղբիւրներէ կը տեղեկացուի թէ հաշտութիւնը տալը տաւանահինգ օրէն պիտի կնքուի, Օսմ. Պետութեան և Պաքստանեան Զինակցութեան միջեւ, եթէ դէպքեր յառաջ չգան մեծ պետութեանց մէջ այն պայմաններուն մասին, զորս զինակիցները առաջարկած էին տէրութեանց միջնորդութիւնը ընդունելու համար:

Կ'ըսուի թէ իթթիհատի գլխաւորները իմացուցած են Վարչապետին, որ այն պարագային երբ կառավարութիւնը որոշէ ընդունիլ էթիոպի անձնատուութիւնը պայմանով որ քաղաքացւոյն զօրքը դուրս ելլէ զինուորական պատիւներով և իրաւունք ունենայ Զաթալաճայի թրքական բանակին միանալու, Գոթիթէն պիտի հակի այս որոշման առջեւ:

Ան պիտի խմբարհի նոյնպէս Էնոս Էնիստա գիծին իրեւ սահմանադրուի ընդունելութեան առջեւ, միայն թէ կառավարութիւնը զինակիցներուն պատեւարաւորական տուգանք չտայ:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Ռոմանոսներու ելեք հարկաւորման կի տալիս տրբուած ընդհանուր ներուժով, բանտերու մէջ գտնուող 470,000 բանտարկեալներէն, արձակուած են միայն 35,000 հոգի՝ խորհրդարանի տեղեկարեքներու հաշորդածին համեմատ:

Յունաստանի Երկիրս թագաւորը, Սելանիկի փողոցներուն մէջ իր սովորական պտոյտը կատարելու տանի զոհ եղաւ մահափորձի մը, զոր գործեց մէկը, ատրճանակի հարուած մը պարպելով անոր դէմ: Գընդակը՝ թագաւորին կռնակէն մտեր և սրէն անցնելով կուրծքէն ելեր է: Թագաւորը անմիջապէս փոխադրուեր է հիւանդանոց, ուր համեւելուն պէս մեռեր է:

Թագաւորին սպանիչն է Ալեքսանտր Սքինաս անունով վատասերած Յոյն մը:

Երկիրս թագաւորին սպանման առթիւ սուգի կէս դրօշ պարզեցին Կ. Պոլսոյ դեսպանատուններն ու մարտանաւերը:

Բարիդէն Մարտ 18 թուով կը հեռագրուի թէ Վարչապետ Մ. Պախան հրաժարեցաւ, Երաւոյար մերժած ըլլալով ընտրական բարենորոգումը՝ համեմատական ներկայացուցչութեան հիման վրայ: Մ. Բուանգարէ ընդունեց դաշինքին հրաժարականը:

Վ Ե Ր Զ Ի Ն Դ Է Պ Ք Ե Ր

Թերթիս տպագրութեանը վերջին պահուն, ինչ ինչ դէպքեր ակներեւ ցոյց տուին թէ եկեղեցւոյ դէմ դործուած բոլոր սրբապղծութիւնները կը կատարուին նախաձեռնութեամբ Վարչական ըսուած ժողովին: Զորքարթի իրիկուն Ս. Փրկիչ Մայր Եկեղեցւոյ բանալիները թաղականներէն մէկ երկուքը զաղտնի սպառնալեօք ժամկոչէն առեր են. զիտէք որու քով ի պահ են գրած... Մ. Մարիկեան էֆ. ի քով, որ այդ բանագրեալ ժողովին անդամ է: Երբ սս-

տիկանապետը բացարձակ հրաման ըրաւ որ այդ բանալիները բերուին, թաղական Յ. Ալան էֆ. ստիկանի մը ընկերակցութեամբ դիմեց այդ Մարիկեան էֆ.ին որ անկէ առնու լերէ բանալիները. և հոն Վարչ. ըսուած ժողովին գլխաւոր գործիչներէն մին՝ բազմութեան տաջեւ՝ ստիկանապետին խոստովանեցաւ թէ եկեղեցիներուն գոց մնալուն հրամանը այդ Վարչականը տուած է:

Ահա Օսմանեան Կառավարութեան կրօնքի և եկեղ. պաշտամունքներու բացարձակ ազատութիւնը պաշտպանելու համար տուած և բացատրած վճռական որոշումին առջեւ սասանելով է որ այդ հրաձուածող ժողովին ատենապետ եղող Գարտաշեան էֆ.՝ հինգշաբթի առաւօր Ոսկերեան եկեղեցին երթալով և իւրեւ թէ բանալիներուն յափշտակուած ըլլալը չդիտարկելով. զանոնք բերել և եկեղեցին բանալ կու տայ: Մինչեւ այդ վայրկեանը ո՛ր էր Գարտաշեան էֆ., ինչպէս չէ կրցած անդեկանալ աշտօրնիս սրբապղծ յափշտակութեան. ինչպէս կ'ըլլայ որ իր ժողովին անդամներէն մին իր սունը կը տանի և կը պահէ բանալիները: Անհրաժեշտ հարկ է որ վար առնուն դիմակին և խոստովանին թէ իրենք են այս սրբապղծութիւնները պատրաստել, կազմակերպել և գործադրել տուողները, և իրենց մտքին մէջ կրօնքի կամ չղոյսութեան կամ արտաքոյ կարգի տկարութեան և Աստուծոյ չվանդանալուն համար պէտք է որ ամօթապարտ ըլլան, մանաւանդ տեսնելով թէ իրոյս կառավարութիւն մը իրենցմէ աւելի լաւ գիտէ եկեղեցիներու անբաժանարարելիութիւնը — Եւ. առաւօտ, Աստուածածին Աթոռանկա եկեղեցւոյն մէջ Ժամեղութիւն, Զայնաւոր Պատարագ և արարողութիւններ ամենայն հանդարտութեամբ և շքեղութեամբ կատարուեցան, ներկայութեամբ հաւատացելոց անթիւ լազմութեան, որոնցմէ շատերը հազորդուեցան: Աստուծոյ դէմ մաքառել չըլլար: Ս. Եկեղեցին վե՛մ է անասան. Ով որ անոր զարմուի, անպատեհաւ պիտի փերուի:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

|                               |     |
|-------------------------------|-----|
| Դէպքեր եւ սկզբունքներ         | 177 |
| Քառազ Յիսուսի չարչարանաց վրայ | 479 |
| Հայ-Կարող իկէ հասարակութիւնը  | 184 |
| Սրբազան Սանդուխ               | 186 |
| Եօթնեակ Քրիստոնէի             | 186 |
| Ճենովացիք ի Հռոմ              | 187 |
| Տեղեկագրական                  | 190 |

ԱՐՏՕՆԱՏԷՐ


ՅՈՎԷ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱԳԵՏ

ԳԷՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԷՐԶԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արձագանգ Շաքարաբերի, Բերա, Պայրամ փողոց թիւ 5, Կ. Պոլս



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դնկ. արծ. վեցամսեայ՝ 20.—  
մէկ քիւ՝ 1 դնկ.:— Արսասահման՝ տար. Քր. 10. վեցամս. 5.—Վհարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

---

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատեհաւ կամ նայմութեամբ նրաստակել իրեն որչափ առ է յօդուած: 3.—Կեղծանունով որչափ յօդուածներու հետեւնալը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրներ պէ՛տ է գրուած ըլլան քուրքին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէ՛տ է անհրաժեշտ երկու դանկանի նամակագրութիւն քի միասին որկել:

---

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայնի նոյն է ի վիճակի է որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիրհո, տեսքներ, հրապարակներ, բարդեր, բարդ-տարեւներ, մահազոյներ, եւն., եւն.: Գիները անմարդեղի կերպով ածան են: Գեղեցկագիտական նաւակի եւ տպագրական մատուցման կողմանէ յանձնարողները անտարակապ զոն պիտի մնան:

---

ԿԸ ԾԱՆՈՒԻ «Տարեկան Սկզբունք Բրիտանեական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր քղթակազմը 2 դնկն.:

---